ՎԱՀԵ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.138

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից կրթական միջավայրում ստեղծագործական ինքնարտահայտման կարևոր ուղիներ են լուսանկարչությունն ու գեղանկարչությունը, որոնք նպաստում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների ինքնաճանաչման, գեղարվեստական ընկալունակության ձևավորման և ստեղծարարության զարգացմանը: Ինտեգրված ուսուցման նման մոդելը ոչ միայն խթանում է նրանց ստեղծագործական կարողությունները, այլև նպաստում է տարբերակված մտածողության, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և գեղագիտական արժեքների խոր ընկալմանը: Այս պարագայում լուսանկարչությունը օգտագործվում է որպես գեղարվեստական արտահայտության միջոց, իսկ գեղանկարչությունը՝ լուսանկարչական աշխատանքների գեղագիտական արժեքների ընդգծման գործիք: Նման մոտեցումը խրախուսում է սովորողներին զարգացնել թե՛ տեխնիկական հմտությունները (լուսանկարչության տեխնիկա, նկարահանման տեխնոլոգիաներ) և թե՛ գեղարվեստական ընկալունակությունը (կոմպոզիցիա, գույների և լուսային արտահայտչականություն): Ուստի լուսանկարչության և գեղանկարչության համակցված ուսուցումը արդյունավետ միջոց է՝ խթանելու սովորողների ստեղծագործական կարողություններն ու գեղարվեստական աշխարհայացքը, որոնք զարգացնում են ոչ միայն տեխնիկական հմտությունները, այլև օգնում են սովորողներին արտահայտել իրենց մտքերը, զգացմունքներն ու գաղափարները գեղարվեստական եզակի ձևերով՝ նպաստելով նրանց ինտելեկտուալ և գեղագիտական զարգացմանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. լուսանկարչական արվեստ, գեղանկարչություն, ինտեգրված ուսուցում, գեղարվեստական ընկալունակություն, մանկավարժական տեխնոլոգիաներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր հասարակության սոցիալ-տնտեսական նոր որակական հարաբերությունների, աշխատաշուկայի կողմից մասնագետներին ներկայացվող բարձր պահանջների և միջազգային կրթական համակարգին ինտեգրմամբ պայմանավորված՝ էական բարեփոխումներին միտված քայլերը դարձել են այժմեական: Հատկապես կրթական բարեփոխումների և գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման հետ կապված՝ առաջացել է նաև կրթության որակի ապահովման գործընթացի արդյունավետ կառավարման, մանկավարժական տեխնոլոգիաների մշակման և ներդրման լուրջ անհրաժեշտություն: Ներկայիս միջին մասնագիտական կրթական համակարգը փորձում է նորովի լուծել գեղարվեստական կրթության և դաստիարակության հիմնախնդիրները՝ կիրառելով ինչպես եղած փորձը, այնպես էլ մշակելով նոր պայմաններ, մեթոդներ, միջոցներ և ձևեր:

Գեղարվեստական մանկավարժությունը, որպես գիտակարգ պետք է նպաստի անձի զարգացմանը, արվեստի միջոցով դաստիարակությանը և սովորողի մեջ գեղագիտական նրբաճաշակություններ ձևավորի: Այս ամենի ուսումնասիրությունը և ներդրումը մանկավարժության մեջ, գեղարվեստական կրթության ոլորտում, լուսանկարչության՝ պատկերի ստեղծման արվեստի միջոցով, հնարավորություն կտա գեղեցիկի ընկալման կարողություն ձևավորել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների գիտակցության մեջ՝ կյանքի ցանկացած իրավիճակում: Գեղարվեստական կրթության խնդիրները լուծելիս հանդիպում ենք դժվարությունների նաև մի շարք այլ պատճառներով: Ուստի անհրաժեշտ է գեղարվեստական կրթության դասընթացների ընթացքում հաշվի առնել միջին մասնագիտական ուսումնական

հաստատություններում և հասարակության մեջ գոյություն ունեցող բոլոր հնարավորությունները, միջոցներն ու ձևերը, որոնց կիրառություններն այդ գործընթացում կլինեն խիստ նպատակային, զարգացնելով սովորողների գեղարվեստական ընկալունակության գործոնը, այդ թվում նրանց լուսանկարչական արվեստի ունակությունները: Վերոթվագրյալի նպատակով կատարված վերլուծություններն ու առաջարկությունները պայմանավորում են հոդվածի գիտական նորույթը: Հոդվածի նպատակն է բացահայտել լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցման դերը՝ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործընթացում: Սովորողների գեղագիտական մտքի ձևավորումը և զարգացումը պետք է մշտապես լինի մանկավարժության ուշադրության կենտրոնում, մասնավորապես գեղարվեստական կրթության ոլորտում՝ առանձնահատուկ կարևորություն տալով ինտեգրված ուսուցմանը, որը կրթական գործընթացում կարող է տալ այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝

- ստեղծագործական մտածողության զարգացման խթանում,
- մտավոր և հուզական խոր կապերի ստեղծում գեղարվեստի միջոցով,
- մարդասիրական արժեքների և էսթետիկ նուրբ ընկալումների ձևավորում՝ անհատական ու սոցիալական մակարդակներում:

Որպես գեղարվեստական գործունեության և ուսուցման տեսակ՝ լուսանկարչության խնդիրն է ինտեգրումը գեղարվեստական կրթության համակարգում: Դա կապված է մեծապես կոմպոզիցիոն ընկալման և կիրառման հետ, որը կարևոր նշանակություն ունի ստեղծագործության կազմության գործում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի իրականացման ժամանակ առաջնային խնդիրների լուծման և գիտական վարկածի ստուգման, հաստատման նպատակով կիրառվել են տեսական, հետազոտական, փորձարարական և էմպիրիկ մեթոդները: Աշխատությանը հարող համապատասխան գիտամեթոդական, մասնագիտական, ուսումնական և լրացուցիչ գրականություն, հայկական առաջատար ուսումնական հաստատություններում ներդրված փորձի ուսումնասիրություն և արդյունքների վերլուծություն: Ինչպես նաև լուսանկարչության և գեղարվեստական կրթության ինտեգրված ուսուցման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը նպաստող ուսուցման մեթոդական նմուշօրինակի իրականացման մանկավարժական պայմանների փորձարկում: Արդյունքում՝ ընդհանուր մասնագիտական պատրաստվածության մեջ որոշվել է լուսանկարչության ուսուցման գործընթացում գեղանկարչության ներքո կոմպոզիցիոն օրինաչափությունների կիրառման միջոցով սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորմանը նպաստող ուսուցման դերն ու տեղը: Այնուհետ բացահայտվել են լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցման գործընթացում սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման գործնականության հիմնական եղանակներն ու ձևակերպվել են այդ ձևավորմանը միտված համապատասխան մասնագետների համար առավել արդյունավետ ուսուցման պայմանները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սովորողների գեղարվեստական գործունեությունը, անհրաժեշտ է ընկալել որպես երևակայության և գեղարվեստական մտածողության ինտեգրված գործունեություն: Գեղարվեստական մտածողության զարգացումը, լուսանկարչության բնագավառում կադրի ձևավորումը, գեղանկարչության արտահայտչամիջոցների ինտեգրումը լուսանկարչական արվեստում՝ սովորողների գեղարվեստական գործունեության և գեղագիտական դաստիարակության խնդիրների շարքին է դասվում: Համապատասխան

ծրագրերի և տեխնոլոգիաների մշակումը՝ ուղղված լուսանկարչության և գեղարվեստական կրթության ինտեգրված ուսուցման շրջանակում գեղագիտական կարողունակությունների ձևավորմանը, կնպաստի սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Երկու վիզուալ արվեստների փոխադարձ կապը կոմպոզիցիոն առումով գլխավոր գործոնն է, որը մեծ ազդեցություն կարող է ունենալ լուսանկարչական արվեստին գեղարվեստական շունչ տալու և սովորողների մտածողությունը զարգացնելու տեսանկյունից:

Գեղարվեստական գործունեության մեջ կարևոր է առանձնահատուկ անդրադառնալ գեղարվեստի մեջ օգտագործվող կոմպոզիցիոն կանոններին, որի դերը և նշանակությունը անփոխարինելի է գեղագիտական գիտակցության զարգացման գործում: Գիտական հետազոտությունների բնագավառում ինտեգրման խնդրին համալիր մոտեցում ցուցաբերվել է՝ Լ. Ներսիսյանի, Ա. Բալյանի, Վ. Աֆանասևի և այլոց աշխատություններում: Ակներև է, որ սովորողների զգացմունքների և ընկալունակության ընդլայմանը մեծապես կարող է նպաստել այս երկու վիզուալ արվեստների ինտեգրումը: Նրանց արժեհամակարգի ձևավորման խնդիրը մշտապես եղել և մնում է կրթության ոլորտի գիտություններով զբաղվող տեսաբանների, մասնավորապես մանկավարժ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Արժեհամակարգի ձևավորման և նրա լինելության ապահովման համար հանրակրթության ասպարեզում կարևոր դեր ու անհերքելի նշանակություն ունի արվեստի ոլորտի առարկաների ուսուցումը: Մասնավորապես լուսանկարչության, որն իր անսահման մեծ հնարավորություններով անփոխարնելի միջոց է աշխարհը և բնությունը ճանաչելու գործում: Լուսանկարչությունը արվեստ է, որտեղ կարևոր է ստեղծագործական միտքն ու ազատությունը, ինքնարտահայտումը, նոր և ինքնատիպ գաղափարներ իրագործումը **(Митчел Э., 1988)**: Սովորողների գեղարվեստական և լուսանկարչական գործունեությունն ինտեգրված ուսուցման շրջանակում արդյունավետ կազմակերպման համար մեծ նշանակություն ունի գեղարվեստական ընկալունակության բարձրացման, նրա համակարգի

ձևավորման, մեթոդների ներդրման և դրանց կիրառման առանձնահատկությունների գործում: Այստեղ հստակ մեթոդաբանության կիրառումը կրթական գործընթացը արդյունավետ կազմակերպելու երաշխիքն է: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ ինտեգրված ուսուցումը կազմակերպելու համար.

1. սովորողի հոգեբանական առանձնահատկությունները,
2. ուսուցման ձևատեսությունը,
3. սովորողի ներուժային հնարավորությունները:

Գեղարվեստական գործունեության հիմնախնդիր է սովորողի ընկալումը բերել դեպի արվեստի ստեղծագործության նկատմամբ հուզական վերաբերմունքի ձևավորմանը **(Петрушин В., 2008)**: Սովորողների արժեհամակարգի մեջ առաջնայիններից է ձևավորել նաև մեծագույն արժեքը՝ սերը դեպի գեղեցիկը, աշխարհը և մարդը: Այս ամենի դրսևորումը հարգանք ու պատկառանք է առաջացնում դիմացինի մեջ: Սույն արժեքը լավագույնս ձևավորվում է գեղարվեստական կրթության, մասնավորապես լուսանկարչության դասերին: Որքան հարուստ, բարձր, ընդգրկուն, վեհ լինի մարդու արժեհամակարգը, զգայական ընկալումը հարուստ լինի գիտելիքով, լայն մտահորիզոնով, այնքան ավելի խորը կլինի գեղագիտական ընկալումը և ճաշակը **(Բայյան Ա., 1980)**: Լուսանկարչական արվեստի հմտությունների տիրապետումը կօգնի սովորողին տեսնելու իրականության գեղագիտական արտացոլանքը:

Գեղարվեստական կրթության մեթոդների, եղանակների ամբողջությունն է, որոնց շնորհիվ արվեստի այս ոլորտում կարող ենք հասնել արդյունքի: Գեղարվեստական մանկավարժության բնագավառում ինտեգրումը ենթադրում է գեղարվեստական ստեղծագործության, գեղարվեստական մշակույթի զարգացման կապը համամարդկային արժեքների հետ **(Ներսիսյան Լ., 2002)**: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել այն գործոնները, որոնք ազդում են սովորողի արժեհամակարգի ձևավորման վրա, քանի որ դրանք այն հիմնական մեթոդներն են, որոնց կիրառման միջոցով սովորողների մեջ

հնարավոր է ձևավորել համապատասխան արժեհամակարգ: Կրթական տարբեր մակարդակներում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարատեսակ դրսևորումներ **(Կորոտով Վ., 1985)**: Լուսանկարչությունը՝ որպես արվեստի նշանակալի երևույթ, կարող է դառնալ սովորողների գեղարվեստական ընկալման, աստիճանաբար զարգացման միջոց:

Շատ կարևոր է մշտապես ուշադրություն դարձնել սովորողի զգացմունքներին և իրականության նկատմամբ նրա վերաբերմունքին գեղարվեստական լուսանկարի պատկերման ընթացքում: Անձի զգացմուքների և վերաբերմունքի ձևավորման, զարգացման հիմքում ընկած է նրա զգայության և ընկալման արդեն ձևավորված ու միևնույն ժամանակ զարգացման փուլում գտնվող ռեալ իրականության նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի դրսևորման կերպը: Լուսանկարչությունը, լինելով տեսողական արվեստ, օգտվելով տեսողական անալիզատորի, վերլուծիչի հնարավորություններից, որը համարվում է ամենամեծ զգայություն ունեցող կշիռը մարդու ընկալման մեջ, կարող է դառնալ հրաշալի միջոց սովորողի գեղարվեստական ընկալման ձևավորման և զարգացման փուլում: Սովորողների հուզազգացմունքային զարգացումը, նրանց հոգևոր աշխարհի հարստացումը՝ մանկավարժության, գեղարվեստական կրթության գործունեության հիմնախնդիրներից է: Կարելի է ասել, որ լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցումը մեծ ներգործություն կարող է ունենալ սովորողի ընկալման վրա, նրա ստեղծագործական փորձը և գեղագիտական ճաշակը կարելի է հարստացնել լուսանկարչության դասերին՝ ծանոթացնելով գեղանկարչական դասական կոմպոզիցիային և ստեղծագործություններին:

Լուսանկարչական՝ ստեղծագործական գործընթացում մեծ կարևորություն ունի պատկերավոր մտածողությունը, որի հիմքն են կազմում պատկերային արտահայտչամիջոցների, հուզագեղագիտական զարգացումը, դաստիարակությունը և այլ գործոններ **(Морозов С., 1985)**: Սովորողների գեղարվեստական գործունեությունը, լուսանկարչության և գեղանկարչության

ինտեգրված ուսուցման ընթացքում կտա նրանց հնարավորություն՝ պատկերի միջոցով դիմացինին հաղորդել այն, ինչն իր կողմից ընկալվում է որպես գեղեցիկ: Գեղեցիկի մասին պատկերացումը իր մաքրագործող հատկությամբ մեծ կարևորություն ունի սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:

Լուսանկարչական արվեստի, մասնավորապես վերջինիս ժանրերից մեկի՝ բնապատկերի միջոցով գեղեցիկի մասին պատկերացումները, կարող են ընդլայնվել՝ սովորողի, բնության հետ փոխհարաբերությունների ընթացքում: Բնությունը սովորողների գեղարվեստական գործունեության վրա ներազդելու հիանալի միջոց է: Լուսանկարչություն դասընթացի շրջանակներում բնապատկերի ուսուցումը, սովորողի մեջ աշխարհաճանաչողություն, վերաբերմունք, մտածողություն և գեղարվեստորեն ստեղծագործելու ունակություններ ձևավորելու հիանալի միջոց է: Գեղարվեստական մանկավարժության մեջ ուսուցման այս միջոցը մեծ ազդեցություն կարող է ունենալ: Կարևոր դեր և նշանակություն ունի տեխնիկայի և էլեկտրոնային միջոցների կիրառումը, դասավանդվող առարկայի շրջանակում՝ տարբեր ուսումնական թեմաների մասին առավել խոր պատկերացում կազմելու, նպատակով **(Московская С., 1995)**: Բնության հետ առնչվելով՝ լուսանկարելով, սովորողը ձեռք է բերում գիտելիքներ, հնարավորություն է ունենում ծանոթանալ բնության տարբեր երևույթներին:

Լուսանկարելու ընթացքում ձեռք է բերվում իմացական գիտելիքներ, օրինակ՝ տեսնելով թե ինչպես է զարթոնք ապրում բնությունը, ինչպես են ծաղկում ծաղիկները, ինչպես է անձրևից հետո առաջանում ծիածանը կամ ինչպես են սկսում դեղնել տերևները և այդպես շարունակ **(Marc Newton, 2023)**: Բնության հետ առնչվելով՝ մարդու մոտ առաջանում է սեր դեպի դիմացինը, դեպի աշխարհը, սովորողները սկսում են ձևավորել գեղեցիկ և դրական վերաբերմունք կյանքի նկատմամբ: Ուսուցման ժամանակ նրանց արժեհամակարգի զարգացման գործում այս մեթոդը շատ կարևոր է: Մեծ նշանակություն ունի նաև իրենց կողմից կատարած տվյալ աշխատանքների վերլուծությունը թե՛ արվեստաբանական և թե՛

հոգեբանական տեսանկյունից: Ուսուցման մատուցման այս միջոցը, որը ներգրավված է ուսումնական գործունեության մեջ, մեթոդական մեծ նշանակություն ունի և իրականացնում է իրեն հատուկ գործառույթ՝ նպաստելով ձեռք բերած գիտելիքների յուրացման արդյունավետությանը: Այստեղ անձի գեղարվեստական մտքի զարգացման մանկավարժական պայմանների հետազոտումը չափազանց արդիական և կարևոր ուղղություն է մանկավարժության մեջ: Զանգվածային տեղեկատվական միջոցների արագընթաց զարգացումը, էկրանային պատկերումը նոր միջոցներով վերարտադրվող հայտնությունն իր հետ առաջ բերեց այժմեականության պահանջներ գեղագիտական և հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում, որոնք էլ տեղեկատվական տեխնոլոգիաների հոսքի ներգործության միջոցով կապված են մարդու մտավորի և հոգեկանի, վարքի և մտածելակերպի հետ **(Дыко Л., 1977)**:

Վիզուալ արվեստի ուսուցման այս ինտեգրված տեսակը հարկավոր է դիտել որպես կարևոր ազդակ մանկավարժագիտության մեջ, որի կիրառումը գեղարվեստական կրթության ոլորտում կապահովի սովորողների գեղարվեստական ընկալունակության զարգացումը և կնպաստի նրանց մասնագիտական ընդունակությունների ձևավորմանը: Իր ժամանակին ֆրանսիացի փիլիսոփա, մանկավարժ Ս. Ֆրենեն առաջ է քաշել անձի ստեղծագործական ընդունակությունների զարգացման հայեցակարգը, որը գերմանացի մանկավարժ Թ. Շտեյները դրեց առաջին ազատ Վալդորֆյան դպրոցի հիմքում: Հետագայում սովորողների ընդունակությունների զարգացման հարցերը ուսումնասիրվել են խորհրդային շրջանի և ժամանակակից մի շարք հոգեբանների ու մանկավարժագետների կողմից (Բ. Գ. Անանև, Տ. Ի. Արտեմևա, Լ. Ա. Վենգեր, Մ. Գ. Դավլեթշին, Վ. Ա. Կրուտեցկի, Ն. Ս. Լեյտես, Ս. Լ. Ռուբինշտեյն, Վ. Մ. Տեպլով, Պ. Մ. Յակոբսոն, Լ. Թ. Ասատրյան, Հ. Լ. Ներսիսյան, Ս. Մ. Ներսիսյան, Լ. Գ. Աթանեսյան):

Ստեղծագործական ընդունակությունների զարգացման տարբեր տեսանկյուններ՝ կոնստրուկտորական, տեխնիկական ստեղծագործական, գեղարվեստական մտածողության, քննարկվել են նաև Պ. Ն. Անդրիանովի, Վ. Ի. Կաչնևի, Վ. Դ. Պուտիլինի, Յու. Ս. Ստոյյարովի, Դ. Ա. Տխորժևսկու, Կ. Բ. Գևորգյանի և այլոց հետազոտություններում: Այդ հետազոտությունների հիման վրա ակնառու դարձավ, որ ընդունակություններն ի հայտ են գալիս ոչ միայն որևէ գործունեության մեջ, այլ նաև նրանց զարգացումը պայմանավորված է ժառանգական տվյալներով, հատուկ կազմակերպված ուսուցմամբ: Բացահայտված են ուսումնական տարբեր հաստատություններում ստեղծագործական ընդունակությունների նպատակաուղղված զարգացման դրդապատճառներն ու հնարավորությունները: Այս հիմնախնդրի առանձին տեսանկյուններ ուսումնասիրված են միջավայրի մանկավարժությանը (Ս. Տ. Շացկի), երեխայի հասարակական միջավայրին (Պ. Պ. Բլոնսկի), շրջակա միջավայրին (Պ. Պ. Բլոնսկի, Զ. Ն. Գինզբուրգ, Ա. Ս. Մակարենկո, Ս. Մ. Ռիվես, Վ. Ն. Սորոկա – Ռոսսինսկի, Ս. Մ. Շացկի) նվիրված աշխատություններում:

Չանտեսելով դիտարկված հետազոտությունների նշանակությունը՝ պետք է նշել նրանց տեսամեթոդաբանական բնույթը: Սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը նպաստող իրական մանկավարժական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ է բացահայտել հոգեբանամանկավարժական պայմանների համալիրը, մշակել նրա իրացման տեխնոլոգիան: Ստեղծագործական ընդունակությունների զարգացումն ու ձևավորումը պայմանավորված է սովորողների ստեղծագործական ակտիվությամբ և երևակայությամբ **(Ростовцев Н., 1980.)**: Ժամանակակից մանկավարժագետների կարծիքով այսօրվա հրատապ խնդիրն է սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացման համակարգի ստեղծումը: Աճող մարդու ամբողջական զարգացումը և ստեղծագործական ազատության դրսևորումը հնարավոր է որոշակի հոգեբանամանկավարժական պահանջների ապահովման դեպքում.

1. դաստիարակչական գործընթացը պետք է ենթարկվի անձի զարգացման կենսական ռազմավարության ձևավորմանը և անհատականացման,

2. ուսուցման տեխնոլոգիաները պետք է դրվեն որակական նոր, ակմեոլոգիական մակարդակի վրա՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ուսուցման նվաճումների հաջողությունը,

3. ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է ստեղծել զարգացնող կրթական միջավայր, որը կնպաստի անձի տաղանդի և ստեղծագործական ընդունակությունների ազատ ձևավորմանը:

Վերոնշյալից ելնելով շեշտենք, որ սովորողների ստեղծագործական ընդունակությունների ձևավորմանը և զարգացմանը, անկասկած, կարող է նպաստել ինտեգրված ուսուցումը, մասնավորապես երկու վիզուալ արվեստների՝ լուսանկարչական և գեղարվեստական կրթության համակցմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, լուսանկարչական արվեստի սույն տեսական վերլուծությունը ինքնանպատակ չէ, քանզի ցանկացած գեղարվեստական գործունեության ուսումնասիրությունը պետք է ծառայեցվի արդի խնդիրներին: Այստեղից հետևում է, որ ժամանակակից կրթական համակարգում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել անցյալում կատարված գիտամեթոդական ուսումնասիրություններին, որոնք ստեղծագործաբար կիրառելով կարելի է հասնել նկատելի արդյունքների: Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճ կերպով ուսումնասիրել լուսանկարչական արվեստն ըստ համապատասխան նեղ մասնագիտական ուղղվածությունների՝ ժամանակակից կրթական և սոցիալական պայմանների ռիթմով, ինչպես նաև կազմել գիտական հիմնավորված տեսական և մանկավարժամեթոդաբանական ձեռնարկներ:

Բացի այդ անհրաժեշտ է ստեղծել լուսանկարչության և գեղանկարչության ինտեգրված ուսուցման մեթոդական համակարգ և սովորողների գեղարվեստական ընկալունակությունը զարգացնելու նպատակահարմար

պայմաններ՝ բարձրացնելով նրանց հետաքրքրությունը դասավանդվող առարկայի և ընդհանրապես ուսուցման նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Կորոտով Վ. (1985)**, Ուսումնադաստիարակչական պրոցեսի ընդհանուր մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ.:
2. **Բալյան Ա. (1980),** Գեղագիտական զարգացման տեսություն, մաս 1, Երևան, «Լույս» հրատ.:
3. **Ներսիսյան Լ. (2002),** Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մեջ, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
4. **Митчел Э. (1988)**, Фотография, Москва, Изд. “Радуга”.
5. **Петрушин В. (2008)**, Психология и педагогика художественного творчества, Учебное пособие для вузов, 2-е изд., Москва, Академический Проект; Гаудеамус.
6. **Московская С. (1995),** Цвет и звук, Педагогика будущего - синтез искусств, СПб.: Изд. «Типография Ивана Федорова».
7. **Морозов С. (1985),** Творческая фотография, Москва, Изд. «Планета».
8. **Дыко Л. (1977),** Беседы о фотомастерстве, 2-е изд., переработ. и доп., Москва, Изд. "Искусство".
9. **Ростовцев Н. (1980),** Методика преподавания изобразительного искусства в школе: Учебник для студентов худ.-граф, фак-тов, Москва, Просвещение.
10. **Marc Newton (2023),** The School of Photography: Beginner's Guide. London, "Ilex press".

REFERENCES

1. **Korotov V. (1985), Owsowmnadastiarakchakan procesi y'ndhanowr met'odika** /General Methodology of the Educational Process/, Yerevan, Publishing House "Luys".
2. **Balyan A. (1980),** Geghagitakan zargacman tesowt'yown /Theory of Aesthetic Development/, Part 1, Yerevan, Publishing House "Luys".
3. **Nersisyan L. (2002),** Gegharvestakan patkeracowmneri teghy' steghc'agorc'akan gorc'owneowt'yan mej /The Place of Artistic Imagination in Creative Activity/, Yerevan, Publishing House "Zangak-97".
4. **Mitchell E. (1988),** Fotografiya /Photography/, Moscow, Publishing House “Raduga.”
5. **Petrushin V. (2008),** Psikhologiya i pedagogika khudozhestvennogo tvorchestva /Psychology and Pedagogy of Artistic Creativity/, Textbook for Universities, 2-nd edition, Moscow: Academic Project; Gaudeamus.
6. **Moskoskaya S. (1995),** Tsvet i zvuk, Pedagogika budushchego - sintez iskusstv /Color and Sound, Pedagogy of the Future - Synthesis of Arts/, St. Petersburg: Publishing House “Ivan Fedorov Printing.”
7. **Morozov S. (1985),** Tvorcheskaya fotografiya /Creative Photography/, Moscow, "Planeta" Publishing,
8. **Dyko L. (1977),** Besedy o fotomasterstve /Conversations on Photographic Mastery/, 2nd edition, revised and expanded, Moscow, Publishing House "Art."
9. **Rostovtsev N. (1980),** Metodika prepodavaniya izobrazitel'nogo iskusstva v shkole /Methodology of Teaching Visual Arts in Schools/: Textbook for Students of Art and Graphics Faculties, Moscow, Prosveshchenie.
10. **Marc Newton (2023),** The School of Photography: Beginner's Guide, London, "Ilex Press."

Ваге Исраелян

Интегрированное обучение фотографии и живописи в художественном образовании

Заключение

Ключевые слова и выражения: *Фотоискусство, живопис, интегрированное обучение, художественная восприимчивость, педагогические технологии.*

Важными способами творческого самовыражения в современной образовательной среде являются фотография и живописи, которые способствуют самопознанию, формированию художественной восприимчивости и развитию творчества учащихся средних профессиональных учебных заведений. Такая модель интегрированного обучения не только развивает их творческие способности, но и способствует дифференцированному мышлению, применению современных технологий и глубокому пониманию эстетических ценностей. В этом случае фотография используется как средство художественного самовыражения, а художественное образование-как инструмент для подчеркивания эстетических ценностей фотографических работ. Такой подход побуждает учащихся развивать как технические навыки (техника фотографии, технологии съемки), так и живописи (композиция, выразительность цветов и света). Таким образом, комбинированное обучение фотографии и живописи является эффективным способом развития творческих способностей и художественного мировоззрения учащихся, которое развивает не только технические навыки, но и помогает учащимся выражать свои мысли, чувства и идеи уникальными художественными способами, способствуя их интеллектуальному и эстетическому развитию.

Vahe Israyelyan

Integrated teaching of photography and painting in art education

Conclusion

Key words and expressions: *Photography, painting, integrated learning, artistic sensitivity, pedagogical technologies.*

Photography and painting are important ways of creative self-expression in the modern educational environment, which contribute to self-knowledge, the formation of artistic sensitivity and the development of creativity of students of secondary vocational educational institutions. This model of integrated learning not only develops their creative abilities, but also promotes differentiated thinking, the use of modern technologies and a deep understanding of aesthetic values. In this case, photography is used as a means of artistic expression, and art education is used as a tool to emphasize the aesthetic values of photographic works. This approach encourages students to develop both technical skills (photography techniques, shooting techniques) and painting (composition, expressiveness of colors and light). Thus, combined photography and painting is an effective way to develop students' creative abilities and artistic worldview, which develops not only technical skills, but also helps students express their thoughts, feelings and ideas in unique artistic ways, contributing to their intellectual and aesthetic development.

Վահե Իսրայելյան – Երևանի «Հայբուսակ» համալսարանի Վեբ դիզայնի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս, Հայաստանում եվրոպական քոլեջի և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ գեղարվեստական մանկավարժություն, արվեստի պատմություն և տեսություն: vaheisrayelyan@mail.ru

Ваге Исраелян - Преподаватель кафедры веб-дизайна и информатики Ереванского университета «Айбусак», преподаватель Европейского колледжа в Армении и Ереванского государственного колледжа информатики. Сфера научных интересов: Художественная педагогика, история и теория искусства. vaheisrayelyan@mail.ru

Vahe Israyelyan - Lecturer at the Department of Web Design and Informatics at the "Haybusak" University of Yerevan, as well as a lecturer at the European College of Armenia and the Yerevan State College of Informatics. Scientific interests: Artistic pedagogy, art history and theory. vaheisrayelyan@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 27.02.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 04.03.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 21.03.2025թ.